


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2004թ. հունվար-ապրիլ		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2004թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլ
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	279637.1	111.9	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	207251.7	109.8	74.1	74.7
բնակչությանը մատուցված ծառայություններ	72385.4	120.4	25.9	25.3

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(ընդհանուրի նկատմամբ, %)**



2004թ. հունվար-ապրիլին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 11.9% աճ՝ 2003թ. հունվար-ապրիլի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 0.6 տոկոսային կետով նվազել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն աճել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2004թ. հունվար-ապրիլին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 207251.7 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.8%-ով: 2004թ. ապրիլին մարտի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 102.1%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2004թ. հունվար-ապրիլին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	207251.7	100.0
այդ թվում՝		
խանութներ	122901.5	59.3
հանրային սնունդ	2163.9	1.1
սպառողական ապրանքների շուկաներ	56650.0	27.3
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	6656.5	3.2
կրպակներ	18879.8	9.1

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2004թ. հունվար-ապրիլին

(ընդհանուրի նկատմամբ, %)



2004թ. հունվար-ապրիլին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 95.7% (198431.3 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2004թ. հունվար-ապրիլին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 56650.0 մլն. դրամ:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի, 2004թ. հունվար-ապրիլին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	52253.4	8.4	91.6
Արագածոտն	34.5	-	100.0
Արարատ	286.2	2.8	97.2
Արմավիր	789.5	20.9	79.1
Գեղարքունիք	412.6	23.8	76.2
Լոռի	1310.1	58.7	41.3
Կոտայք	666.3	16.6	83.4
Շիրակ	316.8	-	100.0
Սյունիք	137.6	-	100.0
Վայոց ձոր	36.3	-	100.0
Տավուշ	406.7	29.0	71.0
Ընդամենը ՀՀ	56650.0	11.1	88.9

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2004թ. հունվար-ապրիլին կազմել է 88.9%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ըստ ՀՀ մարզերի

(ընդհանուրի նկատմամբ, %)



2004թ. հունվար-ապրիլին 2003թ. հունվար-ապրիլի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 0.7 տոկոսային կետով:

2004թ. մայիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 50532.2 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 59 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-ապրիլին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.2% կամ 6656.5¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ


2004թ. հունվար-ապրիլին ՀՀ սպառողական շուկայում բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը ընթացիկ գներով կազմել է 72385.4 մլն.դրամ, որը 2003թ. հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 20.4%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 1187.8 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 37.8%-ով:

2004թ.հունվար-ապրիլին 2003թ. հունվար-ապրիլի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 2.0% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (10.2%),մարդատար տրանսպորտի (6.0%), փոստային և հեռահաղորդակցության (4.0%), մշակույթի (26.7%),զբոսաշրջության և էքսկուրսային (1.6%), առողջարանների և հանգստյան տների (2.9%), բնակարանային-կոմունալ տնտեսության (1.1%) ծառայությունների սակագների հավելաճով: Կրթության և կենցաղային ծառայությունների սակագները նվազել են համապատասխանաբար 1.5 և 0.9%-ով:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը
2004թ. հունվար-ապրիլին**

(ընդամենի նկատմամբ, %)



2004թ. հունվար-ապրիլին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (19224.2 մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (23872.5 մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 27.5 և 32.5 %:

2004թ. հունվար-ապրիլին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 687.5 մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 1.0%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 43.5 մլն. դրամ: